# ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ

(1875-1957)



## ՁԿԱՐՃԱԼԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Հեռավոր այդ օրերի մշուշից բանաստեղծի մտապատկերում վերակենդանացել են առաջին «ուսումնառության» ուրախ ու տխուր, նաև զավեշտալի ամիսները: Ավետիքի խոսքով՝ ինքն այդ «ուսումնարանն» է մտնում «բացարձակ անգրագետ և հեռանում նույնչափ անգրագետ»: Արդեն հասուն տարիքում գրողը մամուլի էջերում տպագրում է հետևյալ պատմությունը՝ *«Շողո-բաջու ուսումնարանը»* վերնագրով.

«Ալեքսանդրապոլում՝ մեր տան ետևը, ցածր, փոքրիկ տներ կային՝ նեղ փողոցների մեջ ցրիվ ընկած: Այդ տնակներից մեկում Շողո-բաջին «ուսումնարան» էր պահում: ...Մի օր, արևային պայծառ օր էր, մայրս և հորեղբորս կինը, ինձ և հորեղբորորդիներիս առաջները գցած, տարան Շողո-բաջու մոտ: Մերոնք հարգանքով բարևեցին Շողո-բաջուն, Շողո-բաջին էլ նույն հարգանքով բարև տվեց և թախտի վրա տեղ հրամցրեց մերոնց:

– Շողո՛ ջան,– ասաց մայրս,– էս մեր անառակներին բերել ենք քովդ (մոտդ), համ գիր կսովորեցնես, համ էլ... գիտես, էլի, ականջները լավ կքաշես, հոգիներս առան...

– Իմ ուսումնարան մտնող չար (չարաձձի) էծերը աստծու գառ

դառած դուրս կուգան, միամի՛տ եղեք, խանո՛ւմ (տիկին) Ապլա,- պատասխանեց Շողո-բաջին:

...Դասագիրք չունեինք, դասագրքի փոխարեն Շողո-բաջին յուրաքանչյուրիս ձեռքը տվել էր թիակաձև մի-մի փոքրիկ փայտե տախտակ. այդ տախտակները նա ստանում էր հյուսնից՝ իրեն պատվերով շինված: Շողո-բաջին տախտակների վրա փակցրել էր սպիտակ թղթեր, որոնց վրա իր ձեռքով գրել էր հայկական տառերը: ...Բռնում էինք տախտակի կոթից և կրկնում Շողո-բաջու ասածները՝ «Այբ, բեն, գիմ», ուրիշ ոչ մի բարդություն, ուղղակի մեքենայաբար անգիր էինք անում: Լավ հիշում եմ, որ այդ տախտակներով բակում հող էինք փորում, խաղում և կռվելիս իրար գլխի տալիս, հաճախ կոտրում: Եվ Շողո-բաջին իր հերթին մեզ ծեծում էր իր ճիպոտով և նոր տախտակի համար փող էր ուզում մեր մայրերից, որոնցից էլ բնականաբար ծեծ էինք ուտում տախտակը կոտրած լինելու համար»:

## ՀԵՏԱՔՐՔՐԱՍԵՐԻ ԱՆԿՅՈՒՆ

Ամառային արձակուրդները պատանի Ավետիքը սովորաբար անցկացնում էր հայրենի Ղազարապատում: Նա մի անգամ գյուղի զարգացած մարդկանցից մեկի՝ տերտերի տան գրադարանում տեսնում է իր այնքա՛ն երազած «Վերք Հայաստանի» վեպը: Տերտերին խնդրում է իրեն տալ այդ գիրքը, սակայն ստանում է հետևյալ պատասխանը. «Ձեր տանը աշխարհաբար լեզվով Ավետարան եմ տեսել, է՛դ տուր Աղասու պատմության դիմացը, և էլ մի սալա (զամբյուղ) ձուկ կուտաք, մենակ խոշոր տեսակից»:

Պատանին ընկերների հետ արագորեն կատարում է տերտերի պայմանը և ստանում բաղձալի գիրքը: «Թանկագին գիրքը մերն էր,- պատմում է Ավետիքը:- Խմբով գնում էինք գյուղից դուրս. մեր հանդում որոշ տեղից պարզ երևում էին Անին, նրա պարիսպները, նստում էինք այնտեղ, երեսներս դեպի Անին, նայում Անիին և կարդում, կար-

դում... Ինչ սրբազան պահեր, ինչ աննկարագրելի ոգևորություն: Մենք չէինք ապրում այլևս ներկայի մեջ, իրական աշխարհում. երևակայության մեջ էինք սավառնում, հայ ժողովրդի փառապանծ անցյալի մեջ և խորհրդավոր, լուսավոր գալիքի հանդեպ»: